



Համարը ՀՕ-52

Տեսակը Պաշտոնական

Ինկորպորացիա

Տիպը Օրենք  
Սկզբնադրյուրը ՀՀԳԽԸ 1993/8  
Հնդունող մարմինը Գերագույն խորհուրդ  
Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 21.04.1993

Կարգավիճակը Գործում է

Հնդունման վայրը Երևան

Հնդունման ամսաթիվը 30.03.1993

Ստորագրման ամսաթիվը 17.04.1993

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

Օրինագիծն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից  
«30» մարտի 1993թ. Հ.Ն.-0773-Ի

**ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

**Հոդված 1. Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը**

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում է ժամանակակից գրական հայերենի կանոնարկմանը, բառակերտմանը, տերմինարանության (եզրաքանության), ուղղագրության, ուղղախոսության, տառադարձության և կետադրության կանոնարկման սկզբունքների մշակմանը:

Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը և տարածմանը:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:

Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը:

(1-ին հոդվածը լրաց. 23.05.11 ՀՕ-162-Ն)

**Հոդված 1.1. Օրենքում գործածվող հիմնական հասկացությունները**

Օրենքում գործածվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

պետական լեզվաբարձրագույն՝ լեզվի բնագավառում պետության ձեռնարկած միջոցառումների ամբողջություն՝ ուղղված պետական լեզվի շահերի պաշտպանությանը, բոլոր ոլորտներում պետական լեզվի կենսագործունեության ապահովմանն ու զարգացմանը.

պետական լեզու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված և պետության

հոգածությամբ ու հովանավորությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գերակայություն ունեցող լեզու.

**պաշտոնական լեզու՝** հայոց լեզվի քերականության, բառապաշտի, արտասանության կանոններին ենթարկվող, պաշտոնական գործառություններին և հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզու.

**պաշտոնական խոսք՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (անկախ կարգավիճակից) ի պաշտոնէ հրապարակային խոսք.

**լեզվավիճակ՝** համաժամանակյա կտրվածքով ներկայացվող լեզվական իրողությունների, զարգացման միտումների և երևույթների ամբողջականություն.

**լեզվական հարաբերություններ՝** պետական լեզվի գործառություններով պայմանավորված՝ լեզվի գործածության ձևեր, որոնք իրականացվում են պետության ներսում և այլ պետությունների ու միջազգային կառույցների միջև առկա փոխհարաբերություններում.

**քրական հայերենի կանոնարկում՝** լեզվի հիմնական քերականական օրենքների, բառակերտման և տերմինարանության միջոցով բառապաշտի հարստացման և քերականական նոր կանոնների ստեղծման գործընթաց.

**լեզվական իրավունք՝** քաղաքացու, հանրության, պետական կամ հասարակական կառույցների լեզվական գործառության նկատմամբ պետության սահմանած իրավունքներ.

**լեզվական պարտականություն՝** Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հաստատությունների կողմից հանրային լյանքի բոլոր դրույներում լեզվական քաղաքականությունից և լեզվական հարաբերություններից բխող սկզբունքների պահպանում.

**գործավարություն՝** փաստաթղթերի ստեղծման, ձևավորման, շրջանառության ապահովման և պահպանման գործընթաց, որը ներառում է կազմակերպակարգադրական (կառավարման և վարչական աշխատանքի կազմակերպումն ապահովող), անհատական, նորմատիվ, տեխնիկական, գիտատեխնիկական, նախագծահաշվային, ուսումնամեթոդական, ֆինանսահաշվապահական, գործաքային, հաշվետու-վիճակագրական, առևտրային, տեղեկատվական, բացատրական, հրահանգային, տեխնոլոգիական, նամակագրական-թոթակցային փաստաթղթերի ստեղծումը և (կամ) ձևավորումը, շրջանառության ապահովումն ու պահպանումը.

**ցուցանակ՝** կազմակերպության որևէ հատվածում տեղադրված հրապարակային գրվածք, որը պարունակում է տեղեկություն կազմակերպության (Փիլիմայի) անվանման և (կամ) կազմակերպարավական ձևի և (կամ) ապրանքանշանի և (կամ) տվյալ աշխարհագրական և (կամ) վարչական և (կամ) քաղաքաշինական և (կամ) տնտեսական և (կամ) հասարակական և (կամ) միավորի անվանման և այլնի մասին.

**պետական վերահսկողության ենթակա փաստաթուղթ՝** պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գործունեությանն առնչվող փաստաթուղթ.

**ժեստերի լեզու՝** լեզվական ինքնատիպ համակարգ, որը դրսևորվում է ձեռքերի իմաստավորված շարժումներով՝ դիմախաղի, շրջունքների շարժումների և մարմնի դիրքի համակցմամբ:

**(1.1-ին հոդվածը լրաց. 23.05.11 ՀՕ-162-Ն, 26.10.22 ՀՕ-406-Ն)**

## Հոդված 2. Կրթության լեզուն

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հոլանդակությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են հիմնել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հանրակրթության ոլորտում միջազգային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները սահմանվում են «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ-մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննություններ և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են: Հայրենադարձների, փախստականների, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող այլազգի քաղաքացիների ու օտարերկրյա քաղաքացիների ընդունելության քննություններն ու ուսուցումը իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետությունում խուլերի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացվում են հայերեն ժեստերի լեզվով:

**(2-րդ հոդվածը խմբ. 03.05.05 ՀՕ-95-Ն, լրաց. 22.12.10 ՀՕ-31-Ն, 28.04.14 ՀՕ-8-Ն)**

**Հոդված 3.****Քաղաքացիների լեզվական պարտականությունները**

Պաշտոնատար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել գրական հայերենին:

Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն գրական հայերենն է, եթե դա չի հակառակ տվյալ միջազգային ասյանում ընդունված կարգին:

Պաշտոնական խոսքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են ապահովել գրական հայոց լեզվի անաղարտությունը:

(3-րդ հոդվածը լրաց. 23.05.11 ՀՕ-162-Ն)

**Հոդված 4. Հաստատությունների լեզվական իրավունքները և պարտականությունները**

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են.

ա) գործադրությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները.

բ) համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու հանրային միջոցառումների, հեռուստառադիմումների ժամանակ ապահովելով հայերեն ելույթների գուգահետ հայերեն թարգմանությունը.

գ) ցուցանակները, ձևադրությունները, դրոշմանիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները, գովազդի բոլոր միջոցները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում գուգակցելով այլ լեզուներով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը գրակացել հայերենով:

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակչության գործամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևադրությունները, կնիքները ձևավորում են հայերեն՝ իրենց լեզվով գուգահետ թարգմանությամբ:

(4-րդ հոդվածը փոփ. 14.04.11 ՀՕ-91-Ն, խմբ., լրաց. 23.05.11 ՀՕ-162-Ն)

**Հոդված 5. Պետական լեզվադարձականության իրականացումը**

Պետական լեզվադարձականությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև դրա համար լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունը իրախուսում է հայերեն լեզվով հրատարակչությունները, մամուլը, ինչպես նաև հայերեն դասազրերի, ուսումնական ձեռնարկների, գիտամեթոդական, տեղեկատու, գիտահանրամատչելի գրականության ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում է պատասխանատվություն սույն օրենքի պահանջները խախտելու համար:

(5-րդ հոդվածը փոփ. 03.05.05 ՀՕ-95-Ն)

**Հոդված 6. Լեզվի կոմիտեն**

1. Լեզվի կոմիտեն դեկավարում է կոմիտեի նախագահը:
2. Լեզվի կոմիտեն՝

1) մասնակցում է լեզվի բնագավառում քաղաքականության մշակմանը և ապահովում այդ քաղաքականության իրականացումը, ինչպես նաև մշակում է լեզվի բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերը.

2) ապահովում է՝

ա. սույն օրենքի պահանջների կատարումը և լեզվական քաղաքականության պետական ծրագրի իրականացումը,  
բ. հայերենի կանոնարկումը և հասարակական լյանքի բոլոր ոլորտներում դրա լիալատար գործածությունը,  
գ. ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների պաշտպանությունը.

3) աշակցում է՝

ա. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետական լեզվական քաղաքականության իրականացմանը,

բ. հեռուստառադիորնկերությունների՝ մշակութային, տեղեկատվական, տեղեկատվական-վերլուծական, հասարակական-քաղաքական, գիտահանրամատչելի, կրթական և մարզական հաղորդումների լեզուն գրական հայերենը լինելու պահանջի կատարմանը.

4) իրականացնում է լեզվաքարողություն, լեզվական փորձաքննություն, լեզվավիճակի մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, վերլուծություններ, կանխարգելիչ միջոցառումներ, գնահատումներ, ինչպես նաև կազմակերպում լեզվադարձականության հարցերին նվիրված միջոցառումներ, խորհրդակցություններ, գիտաժողովներ, սեմինարներ, ասուլիսներ.

5) լեզվական պարզաբանումներ է տալիս հայերենի կանոնարկման և կիրառման, անձնանունների, հայրանունների և ազգանունների, աշխարհագրական տեղանունների, ինչպես նաև առանձնահատուկ բարդության տերմինների, հասկացությունների վերաբերյալ.

6) նպաստում է՝

ա. Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը,

բ. ոչ հայախոսների համար լեզվական ուսուցման հատուկ ծրագրերի մշակմանը:

(*6-րդ հոդվածը լրաց. 23.03.18 ՀՕ-305-Ն*)

**Հայաստանի Հանրապետության**

**Նախագահ**

**Լ. Տեր-Պետրոսյան**

17 ապրիլի 1993 թվականի,

քաղ. Երևան

ՀՕ-52